


Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Սարսափելի Ժամանակ Յիսուսի համար



Written by: Edward Hughes
Illustrated by: Byron Unger; Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
Adapted by: M. Maillot; Sarah S.

Story 38 of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Երբ Յիսուս
կնքուեցաւ
Աստուած
իստեցաւ եւ
ըսաւ. "Այս է իմ
սիրելի որդիս:
Իրմով ես
երջանիկ եմ":
Աստուծոյ Սուրբ
Յոգին իջաւ
Յիսուսի վրայ
աղաւնիի նման:




1

Այդպէս ետք, Աստուծոյ
Սուրբ Յոգին Յիսուս
առաջնորդեց
անշրդի տեղ մը:
Յիսուս առանձին էր:




2

Յիսուս ծով պահեց քառասուն
օր: Այդ կը նշանակէ, որ որեւէ
ուտելիք չկերաւ: Ան շատ
անօթեցաւ:



3

Սուրբ Գիրքը կ'ըսէ, թէ հոն ալ
վայրի գազաններ կային:




4

Սատանան եկաւ փորձութեան
մատնելու համար Յիսուսին:



5

Երկար ժամանակ առաջ ան
փորձութեան մատնած էր
Ադամին եւ Եւային, որպէսզի
Աստուծոյ չենթարկուին
Եդեմի պարտեզին
մէջ: Հիմա
Յիսուս պիտի
փորձուի:



6

Սատանան
նոյնիսկ կրնայ
փորձել Աստուծոյ
որդիին՝ Յիսուսի:




7

"Եթէ Աստուծոյ որդին ես",
ըսաւ սատանան, "այս քարերը
հաց դարձուր": Ան գիտեր, որ
Յիսուս անօթի էր:




8


Ան գիտեր, թե Աստուծոյ տղան կրնայ քարերը հացի վերածել: Արդեօք Յիսուս կը հնազանդի սատանային:



Ո՛չ: Յիսուս չհնազանդեցաւ սատանային: Փոխարէնը ան Աստուծոյ խօսքին պատասխանեց: "Մարդ հացով միայն պիտի չապրի, այլ ամէն մէկ խօսք, որ կ'ելլէ Աստուծոյ բերանէն":





Այդպէ տեղ սատանան Յիսուսը առաջնորդեց մեծ քաղաք՝ Երուսաղէմ, սուրբ տաճարը, ուր ժողովուրդը Աստուծոյ կը պաշտէ: Նորէն ի՞նչ պիտի ընէր արդեօք սատանան:



"Եթէ Աստուծոյ որդին ես, վար նետէ ինքզինքդ", ըսաւ սատանան "իր խօսքը կ'ըսէ, թէ իր հրեշտակները պիտի փրկեն քեզի":




"Ո՛չ" պատասխանեց Յիսուս "Նաեւ գրուած է... Պիտի չփորձես քու տէր Աստուածդ":



Սատանան նորէն փորձեց: Ան Յիսուսը տարաւ քաղաքէն դուրս լեռան գագաթը:

Յիսուսի ցոյց տուաւ աշխարհի փառքերը եւ թագաւորութիւնները եւ սատանան ըսաւ. "Ես քեզի պիտի տամ այս ամէնը եթէ գետին իյնաս եւ ինծի պաշտես":



15

"Ետիս գնա՛ սատանայ" հրամայեց Յիսուս: "Գրուած է, պիտի պաշտես միայն տեր Աստուածդ եւ միայն իրեն պիտի ծառայես":




16

Պահ մը սատանան Յիսուսին քովէն հեռացաւ: Այդկէ ետք հրաշալի բան մը պատահեցաւ:



17

Աստուած իր հրեշտակները դրկեց, որպէսզի հանգստացնեն եւ հոգ տանին Յիսուսի իր որդւոյն, որ չենթարկուեցաւ սատանային:



18

Սարսափելի ժամանակ Յիսուսի համար

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 4, Ղուկաս 4

"Ընդ խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի իսկիւն վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՛ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16